

Արամ Գ. Ալեքսանյան
Բանասիր. գիտ. թեկնածու

ԷՎՈԼՅՈՒՑԻՑԻՈՆՆԻԶՄԸ ՈՐՊԵՍ
ԳՈՅԱՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՍՏԻՃԱՆ

Կրկին Թումանյանի կենսափնաստասիրության մասին*

Բանալի բառեր – քննական համադրական ուսումնառություն, բնագանցական մտածողություն, բարեշրջություն, միստիկա, եկեղեցի, կրոն, հայությունը որպես համամարդկային բարեշրջության սուրյեկտ, բարեշրջության նախադրյալներ և միջոցներ:

Մուտք

Հովհաննես Թումանյանի կենսափնաստասիրությունը մինչ օրս չի դարձել առանձին հետազոտության թեմա, որովհետև Մեծ լոռեցու աշխարհայացքը և գեղարվեստական ժառանգությունը երբևէ չեն համակարգվել ու դիտարկվել եվրոպական իմաստասիրության համատեքստում:

Անշուշտ, 2019 թ. հրապարակված մեր «Լևոն Շանթի և Հովհաննես Թումանյանի կենսափնաստասիրությունը»¹ հետազոտության մեջ բացահայտել ենք Լևոն Շանթի և Հովհ. Թումանյանի՝ Վիլհելմ Վունդտի պսիխոֆիզիկայի ուսմունքին առնչվող որոշ արմատական ըմբռումներ (բարեշրջության տեսություն, ժողովուրդների հոգեբանության ճանաչման անհրաժեշտություն, աշխարհի՝ որպես հոգևոր ռեալության մտակարգում, մարդկության համընդհանուր կամային միասնությունն ու իդեալը և այլն): Դիտարկվել է նաև աշխարհագրական դետերմինիզմի և կուլտուր-պատմական սկզբունքի դերառույթը բանաստեղծի կենսափնաստասիրության համակարգում: **Բայց Հովհ. Թումանյանի կենսափնաստասիրության**

* Հոդվածն ընդունվել է տպագրության 11.02.2022:

1 Տե՛ս **Ալեքսանյան Ա.**, Լևոն Շանթի և Հովհաննես Թումանյանի կենսափնաստասիրությունը, «ՎԷՄ» հանդես, Եր., 2019, N 1, էջ 67-100:

ակունքները միայն Վիլհելմ Վունդտի ուսմունքով չեն սահմանափակվում, քանզի նրա ուսումնառության շրջանակներն առավել ընդարձակ են, քան ներկայացվել է:

Թումանյանը այս կամ այն չափով դարձել է նաև այլ իմաստասերների ու արվեստագետների ժառանգության հաղորդն ու կրողը: Այդ առումով անհրաժեշտ ենք համարում ընդգծել բանաստեղծի կենսափնաստասիրության մի էական առանձնահատկություն, այն է՝ նրա ուսումնառությունը, ըստ էության, երբևէ չի եղել որևէ ուսմունքի կամ գաղափարի ուղղակի և անփոփոխ յուրացում այն պարզ պատճառով, որ, իր իսկ խոսքերով, ճանաչողության ընթացքում «միշտ մի ձշմարիտ, ուղիղ ու հզոր առաջնորդ» է ունեցել, և դա եղել է իր «բնագդը»²:

Նույն օրինաչափությամբ եվրոպական և ռուսական գեղարվեստի ազդեցությունը Թումանյանը ոչ թե անմիջականորեն արտահայտել է իր կոնկրետ գործերի կամ տողերի մեջ, այլ զգացել է իր **հոգու, երևակայության և բարոյական ամբողջության** վրա (տե՛ս 9, 344): Ավելին՝ բանահյուսությանը, առասպելներին, էպոսին առնչվող շատ վիճարկելի խնդիրների առումով Թումանյանը շատ հաճախ է հակադրվել գիտության կողմից ընդունված տեսակետներին և առաջադրել իր տեսակետը: Նամակներից մեկում նա գրում է. «...գիտնականները մեկնություն են տվել, թե գարնան գալն է հեքիաթի առարկան, ...հանդրգնություն ունեցա գիտնականների հակառակ իմ ունեցած մեկնությունը, միտքը նկատել հեքիաթի մեջ և այն զարգացնել ու երգել: Ինչպես դու գիտես, իմ կարծիքով, բանաստեղծության ու մուզիկայի ծնունդն է հեքիաթի առարկան» (9, 238): Այս ըմբռնումը առանցքային է բանաստեղծի կենսափնաստասիրության մեջ, ուստի հետագա շարադրանքում կիստակեցվի դրա իմացաբանական հաստատվածքը:

Այս և նման շատ վկայակոչումներ բավարար են շեշտադրելու, որ Թումանյանի աշխարհայացքը բնորոշվում է այն որակապես տարբերակող մի շատ էական առանձնահատկությամբ. այն հիմնականում ձևավորվել ու համակարգվել է **քննական և համադրական** եղանակներով:

Թումանյանի մտածելակերպն իր բնույթով, ըստ էության, **բնագանցական է**: Հանձարեղ **բնագանց** մտածողները հատկորոշվում են գոյի երևութաբանությունը շարժող, կազմակերպող **սկզբունքը** ճանաչելու, բացահայտելու առաքելությամբ: Համանման առաքելությամբ է Ամենայն հայոց բանաստեղծը հետևողականորեն հաղորդակցվում փիլիսոփայության և

2 **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 6, Եր., 1994, էջ 513: Այսուհետ մեջբերումների հատորը և էջերը կնշվեն տեքստում փակագծերի մեջ (հատ. 1, Եր., 1988, հատ. 2, Եր., 1990, հատ. 3, Եր., 1989, հատ. 7, Եր., 1995, հատ. 8, Եր., 1999, հատ. 9, Եր., 1997, հատ. 10, Եր., 1999):

գիտության բացահայտումներին: Որպես արդյունք՝ նրա **քննական** յուրացման և մենության մեջ **խաղաղ մտորումների** շնորհիվ համադրվում է գոյի՝ **իրենով իմացված և անհատականացված** իմաստասիրական տարբերակը:

Բնագանց մտածելակերպը **համակարգման** գործառույթ ունի և մշտապես գործարկվում է **գոյության իմաստի** հստակեցմամբ՝ կեցության երևութաբանությունը պայմանավորող արմատական պատճառների ու օրենքների իմացությամբ: Իմաստասերները այս իրողությունը հիմնավորում են որպես օնթոլոգիայի՝ գոյաբանության պաշտպանական բնագրի իմացական դրսևորում (защитная рефлексия) իր միասնությունը կազմալուծող՝ կեցության առանձին ոլորտների կենտրոնախույս ազդեցությունների դեմ, որով և կանոնակարգվում է գոյընթացը իմացության ոլորտում:

Բացարձակը կառուցվածքայնացնելու՝ իմացության գործառույթը, ըստ էության, առկա գոյընթացի կազմակերպվածությունը հետադարձ կապով կայունացնելն է, այլապես չնպատակաբանված գոյընթացի գիտակցումը, մեծացնելով անորոշության էնտրոպիան, ներկա կեցության կառուցակազմի համահարաբերակցության մտավոր, բարոյական, հոգեբանական կենտրոնը գրկում է որոշակի էական ներուժից:

Այնքանով, որ բնագանց մտածողությունը նման գործառական կոչվածություն ունի, այն չի կարող լիարժեքորեն գործարկվել պատմական կոնկրետ ժամանակի խնդրադրության (սոցիալական, քաղաքական և այլն) համատեքստում. «...ծանրանում են մեր աշխարհի ամեն ցավերը, գուցե այդ արդեն ապացույց է, որ ես էլ եմ բանաստեղծ, բայց, ասում եմ, զարմանալու բան է, ես առանց երգելու հոգնած եմ այդ ցավերից ու սիրում եմ **բոլորովին ուրիշ ցավեր, ավելի անուշ, ավելի աստվածային**, երջանիկ ցավեր: Չգիտեմ այսպես է, թե՞ ինձ այսպես է թվում. թե կարող ես ջոկիր. այս ի՞նչ **կենտրոնախույս** տրամադրություն էր, որ իմ մուսային դարձնում է դավաճան՝ ազգի առջև» (9, 290),– գրում էր բանաստեղծը 1902 թ.:

Թումանյանը հաճախակի է շեշտել, որ իր իմացական հետաքրքրությունները դուրս են կրոնական, հասարակական և կուսակցական կոնկրետ խնդրադրություններից³: Ավելի լայն_հայացքով աշխարհը դիտարկող Թումանյանը այս կամ այն չափով հաղորդ էր համաշխարհային իմաստասիրական մտքին և գեղարվեստական մշակույթին: «Մրտիս ուզած ժամանակ

3 «...ես իմ ողջ էությանը ապրում եմ **մարդկային կյանքից ավելի մեծ կյանքով**, հենց էնպես, ինձ համար, և անընդունակ եմ մի որևէ վանդակի մեջ փակվելու, էն տեսակ երգեր երգելու, որ ձեզ դուր գա (ընդգծումները մերն են – Ա. Ա.)» (6, 190): Մեկ այլ առիթով. «(Բայց) Իհարկե, էն մարդը, որի **միտքը** անդադար **գործում է ու որոնում**, չի կարող զինվորագրվել որևէ թերթի կամ կուսակցության, անգամ թե՛ դրանք կարող են շատ կարևոր ու շատ լավը լինել»: «Ահա քրիստոնեությունը. ինձ համար էնքան աստվածային է, բայց ես քաշվում եմ ինձ քրիստոնյա անվանելու: Մարդու աշխատանքի ու վաստակի արդար բաշխման գաղափարը ինձ համար էնքան սուրբ է ու վսեմ, բայց ինձ սոցիալիստ չեմ անվանիլ երբեք (ընդգծումները մերն են – Ա. Ա.)» (7, 489):

խոսում էի Շեքսպիրի, Գյոթեի, Նիցցեի ու Բրանդեսի հետ ու կրկին խաղաղ մտորում» (9, 262),- գրում է նա: Այդ «խաղաղ մտորումների» շնորհիվ էլ, ինչպես նշել ենք, որոշարկվում է **զուտ** թումանյանական կենսամաստասիրությունը, որը **որակապես ինքնուրույն էկլեկտիկ համադրություն է, և որը չի կարելի դիտել որպես որևէ ուսմունքի համարժեք հետևողություն:**

Ուսումնառած գաղափարների իրահատուկ կիրարկմամբ նաև, ըստ էության, Թումանյանի միտքն ու էությունն են կերտել Անհունն էավորող իմացության այդ համապարփակ և եզակի համադրությունը: Այդ առումով մարդկային իմացության համապարփակ համակարգումների համատեքստում նրա կենսամաստասիրությունը առանձնանում է որպես մարդու, գոյի իմաստը և նրա նպատակաբանված ընթացքը՝ թելեոլոգիան, Անհունին կամրջող անկրկնելի իմացական տարբերակ:

1. Միստիկա, եկեղեցի, կրոն

Մեր նախորդ ուսումնասիրությամբ⁴ բացահայտել ենք, որ բանաստեղծի կենսամաստասիրության առանցքը էվոլյուցիայի՝ **բարեշրջության** ուսմունքն է, որով մտակարգվում են մարդու էության լավասերման, կատարելության տանող միջոցները և կերպերը, ինչն արմատապես փոխում է բանաստեղծի ընկալումների ժամանակային կառուցվածքը: Այդ ըմբռնման շրջանակներում **ապագան** դառնում է ոչ միայն պատկերացումների, այլև գործունեության գլխավոր կողմնորոշումը, ինչն ուղղորդում, վեկտորացնում է բանաստեղծի գիտակցությունը, նպատակաբանում նրա ստեղծագործական գործունեությունը: Աստիճանաբար փոխվում են բանաստեղծի աշխարհընկալումը, հուզական արձագանքները: Առաջընթացի ըմբռնումից են առաջադրվում նաև մարդու վարքը կանոնակարգող համապատասխան բարոյական նորմեր, ինչը դրապաշտները համարում են էվոլյուցիոն բարոյականություն:

Գիտական մտածողության զարգացման շնորհիվ 19-րդ դարում որոշարկված **բարեշրջության սկզբունքի** իմաստասիրությունը լոկ երևակայությամբ ուրվագծված ապագայի լավատեսական իդեալականացում չէր այլևս: Աշխարհը և մարդը հետազոտող **դրական (позитив) հետազոտությունների** շնորհիվ այն ձեռք էր բերում գիտական, փորձառական հիմնավորումներ և վերաճում **տեսության:**

4 Տե՛ս **Վեբսանյան Ա.**, նշվ. աշխ.:

Հայտնի է, որ փաստերը միայն **համակարգված** լինելու դեպքում են դառնում բացատրելի, քանի որ փոխկապակցված և իրենց գործառությանին նշանակությամբ դիտարկվելով են միայն հնարավոր դարձնում պատճառահետևանքային կապերի բացահայտումը: Մարդու էության կատարելագործման և բարեշրջության խնդիրը դրական հետազոտությունների շնորհիվ միատիկայի և քրիստոնեական էթիկայի ոլորտներից այլևս տեղափոխվում է **գիտական** ճանաչողության հարթություն:

Դրապաշտ իմաստասերներն ընդգծում են, որ մինչդրապաշտական, մասնավորապես կրոնական ուսմունքները այդպես էլ չկարողացան հիմնավորապես լուծել բարոյական կանխադրությունների և մարդու էության, վարքի ներդաշնակեցման խնդիրը: Եթե քրիստոնեական միջնադարը ջանում էր մարդու էությունը և վարքը պայմանավորել քարոզչությամբ կանխագծված բարոյական պատվիրաններով, ապա գիտական մեթոդներով հետազոտող դրապաշտները հոգեբանությունը, վարքը հիմնավորում են ոչ թե անառարկելի, նախապես սահմանված դոգմատիկ կանոններով, այլ կենսաբանական պատճառակիրներով (детерминант): Այդ իրողության շնորհիվ, ըստ ֆրանսիացի իմաստասեր **Հիպոլիտ Թենի** (1828-1893), բարոյագիտությունն առանձնանում է աստվածաբանությունից և մերձենում բնագիտությանը որպես դրա անմիջական շարունակություն: «Հոգու, նրա ծագման և հետագա ճակատագրի մասին արվող եզրահանգումները ամբողջությամբ արդեն համարվում են ոչ թե Հայտնությամբ մեզ հաղորդված ճշմարտությունների, այլ ամբողջովին հետազոտությամբ ձեռք բերված տվյալների հետևանք»⁵, - գրում է նա:

Մարդու բարեշրջության հեռանկարը Թումանյանի կենսաիմաստասիրության համատեքստում համանմանորեն ուրվագծվում և մտակարգվում էր միատիկայի շրջանակներից և հնարավորություններից դուրս: Թումանյանը, դեռևս վաղ շրջանից սկսած, կասկածի է ենթարկել նախախնամականությունը (провиденциализм): Այդ կապակցությամբ նա տարբեր առիթներով արտահայտել է իր տեսակետը: Նման սկեպտիցիզմը դրսևորվել է նաև նրա պոեզիայում.

Ա՛խ, ես երանի
Կայծա՛կ լինեի
Որոտ-ձայթյունով
Մըռայլ ամպերից
Ժայթքեի ըմբոստ,
Զարկեի ուժգին,

5 **Тен И.**, Происхождение общественного строя современной Франции, т. 1, СПб, 1907, с. 250.

Պատռեի խավար
 Կանարը երկնի,
 Ցույց տայի մարդուն
 Գաղտնիքը վերին,
 Որ տեսներ՝ այնտեղ
 Ի՞նչ բան կա ահեղ,
 Կամ ո՞վ է նըստած,
 Եվ ո՞ր է աստված.... (1, 83)

Թումանյանը գրում է, որ կյանքը տանջանքի և ցավերի հանդես է, հետևաբար ինչո՞ւ չկա աստվածային միջամտություն.

Եթե աստված ես
 Դու խաղաղության:
 Տե՛ր արագահաս,
 Աստված արդարի,
 Ո՞ր ես, եթե կաս...
 ...Եթե աստված ես
 Դու անմեղության
 Ինչո՞ւ տակավին
 Չես պատժում չարին... (1, 85)

Միստիկան՝ որպես մտածողության զարգացման այլևս հաղթահարված պատմական աստիճան, հատկապես տեսանելի է Թումանյանի՝ Լև Տոլստոյի մահվան առիթով գրած հպանցիկ, բայց սպառիչ բնութագրում: «Ընկավ մեծ **գեղարվեստագետը**, մեծ **քարոզիչը** ու մեծ **դժգոհը**» (6, 261). այս ստորագելիներով է բացահայտում Թումանյանը Տոլստոյ ֆենոմենը: Նրա էվոլյուցիոնիստական ընթանումներից են համադրվում նաև Լև Տոլստոյ ֆենոմենը հատկորոշող ընդհանրացումները: Թումանյանի բնորոշումներում, իհարկե, համարժեք գնահատական է տրվում «**Ժամանակի** հսկա փիլիսոփայի»՝ կյանքը գեղարվեստորեն վերարտադրելու վարպետությանը: Գեղարվեստագետ, որը կարող էր «մի հայացքով ու մի գրվածքով ամփոփել կյանքը ահագին տարածության վրա՝ վերևից մինչև ներքև, արտաքին կեղևից մինչև հոգու ամենածածուկ խորշերը» (6, 260): Սակայն հաջորդ բնութագրումների տրամաբանությունը հանգում է այն ակնառու եզրակացությանը, որ մարդու անկատարությունը հաղթահարումը, ըստ էության, Տոլստոյը տեսնում և **քարոզում է** միստիկայի հնարավորությունների համատեքստում: Նա քարոզում է մարդուն նվիրվել **սիրո** ու **բարության** աստծուն: «Նա աշխատում էր լուծել **կյանքի առեղծվածը**, խո-

րամուխ լինել, հասկանալ ու պատասխան գտնել, թե **ինչո՞ւ է ապրում մարդը: Գերագույն ապավեն էր որոնում, աստված էր որոնում տառապող ու դժբախտ մարդկության համար** և գտնում էր նրան ոչ թե ուժի մեջ, այլ **արդարության, ճշմարտության, ներքին բարոյական մաքրության և այն սիրո մեջ, որ հավասարեցնում ու եղբայրացնում է մարդկանց**, թշնամի չի ճանաչում աշխարհքում, չի հակառակում նույնիսկ չարին, և ազատությունն էլ հենց սրա մեջ էր դավանում» (6, 260):

Թումանյանը ռուս հանձարի երևույթը, ըստ էության, ակամա ընկալում և շեշտում է որպես դոգմատիկ բարոյականության **միատիկ** քարոզչություն և իրականությունից **դժգոհ** հոգու անհանդուրժող արձագանք: Մի իրավիճակ, որից, կարծում ենք, աստիճանաբար ծնվում է Տոլստոյի անձնական տառապանքը, որն արդյունք էր ոչ այնքան մարդու անկատարության գիտակցման, որքան մարդու էության բարեշրջմանն ուղղված քարոզվող միատիկայի հնարավորության վերացականության ընկալման: Ըստ էության, անձնական տառապանքը դառնում է նրա հայացքների և մշակութային գործունեության շարունակությունն ու հետևանքը: Թերևս ենթագիտակցորեն նա զգում էր, որ «իրար չզրկելու, չհալածելու, չկոտորելու, այլ հաշտ ու խաղաղ ապրելու, մեկմեկու օգնելու ու եղբոր նման սիրելու» (6, 262) առաջադրված քրիստոնեական բարոյական իդեալը քարոզչությամբ կյանքի չի կոչվում: Ըստ գերմանացի իմաստասեր, աստվածաբան **Ալբերտ Շվեյցերի** (1875–1965)՝ «Բոլոր էթիկական ուսմունքների՝ ինչպես կրոնական, այնպես էլ փիլիսոփայական, թուլությունն այն է, որ դրանք անմիջականորեն և բնականորեն անհատի մեջ չեն շփվում իրականության հետ: Շատ առումներով դրանք անցնում են փաստերի կողքով: Դրանք տարբերակված ձևով չեն մոտենում անհատի ապրումներին և այդ պատճառով էլ չեն ունենում նրա վրա մշտական ազդեցություն: Որպես արդյունք՝ ի հայտ է գալիս խոհազուրկ և ճոռոմ բարոյականությունը»⁶:

Մարդուն հուզող շատ հարցեր, դասվելով կեցության անքննելի խորհուրդների շարքը, կրոնական գրականության մեջ չունեն բացատրության ռացիոնալիստական պատճառականություն: Իդեալի իրականացման կերպը, ըստ դրապաշտների, հնարավորինս կիստակվի միայն մարդու էության, նրա բնույթի գիտական հետազոտությամբ: «**Անհատական և ունիվերսալ** նպատակների համաձայնեցումը, որը և բարոյականության առարկան է, որպեսզի դառնա հնարավոր,– հիմնավորում է ֆրանսիացի իմաստասեր Ալֆրեդ ֆուլիեն (1838–1912),– չպետք է հակասության մեջ լինի **մարդու բնույթի** հետ, **մարդկային կամքի հիմնական ուղղվածության** հետ: Հարկ է, որ իդեալը, որը ներդաշնակությունն է մարդու և ամբողջի,

6 Швейцер А., Культура и Этика, М., 1973, с. 118.

իրականում որոշ հիմք ունենա, առանց որի՝ այն արդեն չի դառնա **գաղափար-ուժ**, այլ կմնա որպես **մաքուր ուտոպիա, որն իրականանալի է լուկ գերբնական ողորմածության հրաշագործությամբ**: Բարոյականության հնարավորությունը պահանջում է, հետևապես որպեսզի իդեալը մասամբ արդեն իրականացված լինի մարդու միջոցով, որպեսզի ներկայումս գոյություն ունենա իրականության և իդեալի միացման կետ, որտեղից ներդաշնակությունը կկարողանա ծավալվել հետագայում, հարկ է, որ անհատական և ունիվերսալ կամքի ձուլումը արդեն **կատարվի մեր էության ընդերքում**՝ *«punctum sabiens»*–ում, որպեսզի նա այնտեղից կարողանա ճանաչել և աստիճանաբար համակել մեր էությունը (ընդգծումները մերն են – Ա. Ա.)⁷:

Իդեալի և իրականի անլուծելի աններդաշնակությունից ծնված խռովքը հաղթահարվում է հոգով ու մտքով վերանալով իրականությունից՝ հայացքը փոխելով: Դրանով իսկ մասամբ ձեռք է բերվում հոգու ցանկալի **խաղաղությունը**: Սակայն, ապրելով «իր համոզմունքներին հակառակ պայմաններում», Տոլստոյի **«դժգոհ հոգին** այլևս չկարողացավ հանդուրժել **այս կյանքին, կամ, ավելի ճշմարիտ՝ կյանքի այս եղանակին**, ու մեջքն արավ նրան, երեսը դեպի անապատ, այն մեծ **դժգոհների** նման, որոնք անապատ են քաշվել իրենց հոգու հետ այնտեղ ապրելու և խորհելու, այնտեղ վայելելու այն ցանկալի **խաղաղությունը**, որ **ստեղծագործող ու բարի հոգիների հայրենիքն է**, այնտեղ մտածելու կյանքի անառակության ու **մարդու փրկության վրա»** (6, 260): Այդ հրաժարումի (*отречение*) շնորհիվ է իմացությունը ձեռք բերում կյանքի իմաստը, գոյընթացը, մարդկության երթը որակապես **նոր** հայացքով քննելու և իմաստավորելու տեսողություն: Պատմական ժամանակի կոնկրետությունը իրականում հաղթահարվում է հավիտենությանը, այն է՝ **գոյության բացարձակացված իմաստին** առնչվելով:

Թումանյանը այդ հեռացումը համարում է իմացական հասունացման նոր աստիճան: «Այսպես առաջ գալով մենք գտնում ենք, որ նրա գործերից ամենամեծ ու բնորոշը, նրա **գլուխ գործոցը** եղավ **վերջին փախուստը** – ելքը Եգիպտոսից» (6, 261): «Ելքը Եգիպտոսից», այսինքն՝ ազատագրություն գերությունից, տվյալ պարագայում՝ հոգևոր գերությունից: Թերևս, այդ, որովհետև Թումանյանը նմանապես նաև հայի հոգին **հոգևոր գերությունից** ազատելու մի համակարգված ծրագիր է առաջադրում:

Առհասարակ պատմական զարգացման, որակական և դարակազմիկ վերաշրջումների սահմանագծում է անհրաժեշտաբար ծնվում էթնոսի գոյընթացը, նրա **ճակատագիրը, ուղին և առաքելությունը** ուրվագծող և

7 Фулье А., Ницше и имморализм, СПб, 1905, с. 317.

հատակեցնող քուրմի, տվյալ պարագայում՝ հոգևոր առաջնորդի ասպարեզ գալու **խորհուրդը**: Ըստ էության, պատմականորեն և ճակատագրով Թումանյանով դրսևորվեց **ամենայն հայոց բանաստեղծի կոչվածությունը**:

Կրոնը Թումանյանի շարադրանքներում իրականում բացատրվում է գուտ դրապաշտական հիմնավորումներով: Հետևաբար մարդու բարեշրջության բանաստեղծի իդեալը կապել քրիստոնեական էթիկայի հետ, մեղմ ասած, ճշմարիտ չէ: Թումանյանի ըմբռնմամբ՝ այդ վերաշրջող ուժը կյանքն է կրում, քարոզը առաջարժիչ գորություն չէ: Այդ նույն ըմբռնման տրամաբանությամբ Թումանյանը ուրվագծում է ազգի գոյընթացը, նրա գոյակերպը, հոգեբանությունն ու մտածելակերպը որակապես **նոր սկզբի վրա** դնելու մի համապարփակ ծրագիր: «...Մինչև այժմ հայ ժողովուրդն ունեցել է մի հոգևոր կենտրոն, - գրում է Հ. Թումանյանը, - Էջմիածնի տաճարը, այժմ մենք ուզում ենք կառուցանել մի նոր տաճար՝ **գիտության, գրականության ու գեղարվեստի** տաճարը... Եվ հայ ժողովուրդը թե՛ նյութական, թե՛ մտավորական կարողություն ունի այս նոր տաճարը կառուցանելու (ընդգծումները մերն են - Ա. Ա.)» (7, 550):

Մեկ այլ առիթով. «Եվ, ով գիտի, - գրում է նա, - գուցե մոտիկ է օրը, երբ հայ մարդը, որ երեկ-մյուս օրը **եկեղեցու** շուրջն էր պտտվում, այնուհետև անցավ **ուսումնարանին**, գալու է հասնի և **գրականությանն** ու **գեղարվեստին**: Թող այդ նշանավոր օրը գա ու գտնի հայ գրական ընտանիքը միասիրտ ու միահամուռ **բարու, գեղեցկի** ու **ճշմարտության** ճանապարհի վրա» (6, 287): Եվ հենց այդ **նոր** գրականությունն է, «որ **հոգևոր գերությունից է** ազատագրելու հայ հոգին, մաքրելու է նրան շատ ստացական արատներից, հանդես է բերելու մի **ինքնուրույն, նոր ու հզոր** հոգի և **մեծ աշխարհից, մեծ կյանքից** ու նրանց **գեղեցկություններից է** խստելու հայի հետ (ընդգծումները մերն են - Ա. Ա.)» (7, 169):

Եթե «ամբողջներն ու ժողովուրդներն գրականությամբ են ազգ դառնում ու մտնում կուլտուրական ազգերի շարքը...», ապա այդ հիմնավորմամբ Թումանյանը այն համարում է ազգի գոյաբանության, բարեշրջության հեռանկարը պայմանավորող **արմատական** նախադրյալ (տե՛ս 6, 339): Եվ քանի որ բարեշրջության **նոր փուլը արարվում**, ուրվագծվում է **ստեղծագործաբար**, հետևաբար այստեղ գիտությունից, գիտական մտածելակերպից էականորեն ավելի մեծ է **գեղարվեստի** գործարկվող ներուժը: «Եթե գիտությունը, ըստ Թումանյանի, պայմանավորվում է մարդկային իմացական կարողության ձևով և բովանդակությունների պարզորոշ արգասիքներով, փորձնական կամ փիլիսոփայական գույներով», ապա հայ գրողին ոչ այնքան զարգացումը, որքան «**ինտուիտիվ ուժն է** պակասում (ընդգծումը մերն է - Ա. Ա.)» (7, 451), որն իր կոչվածությամբ ի գորու է **նոր հիմքի** վրա ստեղծագործաբար ձևավորելու էթնոսի գոյընթացի բաղա-

դրատարրերի **որակապես** փոփոխված համահարաբերակցություն և՛ իր ներսում, և՛ մարդկության հոգևոր առաջընթացի համատեքստում:

Հովհաննես Թումանյանը հետևողականորեն որոնում էր, իր իսկ խոսքերով, այն «**պատմական և իրական հիմունքները**», որոնց շնորհիվ տեղի է ունենում բարեշրջությունը: Ինչպես արդեն նշել ենք մեր նախորդ հոդվածում, բանաստեղծը դա համարում էր **բանաստեղծության ոգին և երաժշտությունը**, որոնք առանձին և խորքային հետազոտություն են ենթադրում: Այա կարևորում էր **գեղեցիկի** դերը. «...Մինչդեռ մեկի {քրիստոնյայի} պաշտամունքի կենտրոնը **բարոյականությունն է**, մյուսի իդեալը՝ ազատ ու արդար հասարակարգը, իմ և իմ նմանների պաշտամունքի առարկան **գեղեցիկն է** ... Բայց ես **քչերի հասկացած գեղեցիկն եմ** ասում (ընդգծումները մերն են – Ա. Ա.)» (7, 491): Ի դեպ, այս կարգը հայկական մամուլի էջերում ժամանակին քննել են մի շարք տեսաբաններ՝ Վ. Նալբանդյանը, Գ. Լևոնյանը, Հ. Ակունյանը, Գ. Խաժակը և այլք:

2. Էվոլյուցիա. նախադրյալներ, միջոցներ

Գիտական հետազոտությունների արդյունքների հիման վրա եվրոպացի դրապաշտ փիլիսոփաները զարգացրին մի տեսություն, համաձայն որի, օրգանական աշխարհի համանմանությամբ, մարդկությունը նույնպես ունի զարգացման օրինաչափ ընթացք: Ավելին՝ մարդկության զարգացումն ընթանում է հենց օրգանական աշխարհի օրենքներով, որը բնականոն օրինաչափությամբ տանում է դեպի բարձրագույն կատարելություն ոչ թե արտաքին միջամտությամբ կամ նախասահմանվածությամբ, այլ ներքին տարրերի և ուժերի գործարկվածությամբ:

Թումանյանի ըմբռնմամբ նույնպես ոչ վերբնական, **բանական** այդ գործությունը գործում է կյանքի օրգանական հյուսվածքում, որը իրենում առկա նախադրյալների նպատակամետ և աստիճանական զուգորդումների ուժով է հունավորում գոյընթացը իրենից իսկ բխող իդեալը կյանքի կոչելու ուղղությամբ: Չնայած որ մաքուր բնության մեջ՝ «պայծառ, պարզ արեգակի» ներքո, ծնվել են «մարդատյաց, անխիղճ ու անսեր հրեշներ», սակայն **խաղաղ է** բանաստեղծի հոգին, քանզի այլ է նրա հայացքը: Նա գիտի, որ մարդկության գոյաբանության հյուսվածքում «իզուր չի ոչինչ», քանզի՝

Կա **մեծ ու զրվարթ, իմաստուն մի ույժ**,
Որ **Մուրճն** աշխարհքից տանում է մարդուն
Դեպի **Լույս** աշխարհք, սեր, եղբայրություն...
(ընդգծումները մերն են – Ա. Ա.): (1, 261)

Թումանյանն այդ ուժն անվանում է «ստեղծագործող ուժ» (6, 435): Նման ըմբռնում շրջանավում էր ժամանակի եվրոպացի որոշ իմաստասերների աշխատություններում: Այսպես, ըստ ֆրանսիացի իմաստասեր Լ. Թենի (1828-1893), մարդկության գոյաբանության պատմությունը նույնքան բնական մի իրողություն է աշխարհում, որքան ամենայն բան: «Նրա ուղղվածությունը ծագում է իր իսկ տարրերից, այն չի ուղղորդվում ինչ-որ արտաքին ուժի կողմից, այլ տեղի է ունենում ներքին ուժերի խաղով: Այն չի ձգտում ինչ-որ նպատակի, այլ պարզապես հանգում է ինչ-որ արդյունքի: Եվ այդ գլխավոր արդյունքը արտահայտվում է **մարդկային ոգու առաջընթացով**:

Խորանալով պատմության մեջ՝ տեսնում ենք, որ, չնայած բոլոր կոտորածներին և ավերածություններին, սերը **կարգուկանոնի** հանդեպ չի դադարում աննկատ ոգևորել մարդկային ցեղին և պահպանում է նրան վերջնական կործանումից: Այդ սերը մարդկային սրտի բնական զսպանակներից մեկն է, որը մշտապես վերականգնում է իր ուժը: Այսպիսով՝ մարդու մեջ գոյություն ունեն **«բանական սկիզբ»** կամ **«մեխանիկական բնագղ»**, որը ներշնչում է նրան տարբեր օգտակար գաղափարներ, և **«արդարության բնագղ»**, որը նրան հուշում է բարոյական գաղափարներ: Այդ երկու բնագղները կազմում են նրա օրգանական կազմակերպվածության մի մասը, որոնք նա ունի ի ծննդե: Ահա թե ինչու մարդն ունակ է կատարելագործվելու իր իսկ բնույթի շնորհիվ, հետևաբար երբ նա բարելավում է իր խելքը կամ իր դրությունը, նա միայն հարմարվում է **իր բնության** օրենքներին (ընդգծումները մերն են – Ա. Ա.)»⁸:

Թենը հոգու քաղաքակրթության արդյունք է համարում **խղճի և պատվի** զգացումները: «Հնազանդվելով ամոթի, մարդկայության, պատվի և խղճի տիրական ձայնին՝ երբևէ անհայտ և լոկ շատ դանդաղ ճանապարհով գոյացած այս բոլոր կանոնները կարող են կոչվել **հոգիների քաղաքակրթություն**: Դրանց սրբությունը չի նվազում այն բանից, որ մենք դրանք ընդունում ենք անքնին, սուսկ հավատ ընծայելով, և ավելի սրբազան են դառնում դրանք միայն, երբ, ենթարկվելով հետազոտության և ողջ պատմության ընթացքում հետամտորեն բացահայտվելով, հայտնի են դառնում մեզ համար որպես այն **խորհրդավոր ուժը**, որը նախկին **կենդանական հոտը աստիճանաբար վերածել է ժամանակակից մարդկային հասարակության**»⁹: Ակնհայտ է, որ, Թենի կարծիքով, մարդուն կատարելագործող առարկայական լծակները **«սրտի** բնական զսպանակներն են», որոնք գործարկվում են միայն մարդու բնույթի շրջանակներում:

8 Тен И., указ. соч., с. 253.

9 Նույն տեղում, էջ 253:

Ի տարբերություն Հ. Թենի, որը բարեշրջության ներուժ հնարավորությունները արձանագրում է մարդու բնական, կենսաբանական, «օրգանական կազմակերպվածության» սահմաններում, Թումանյանը արդյունավետ է համարում այդ ներուժը հիմնականում **էթնոսի՝ հավաքական էության** գոյընթացը կազմակերպող և իմաստավորող **էական** մղումների դրսևորման շրջանակներում բացահայտելու փորձը: Դեպի «բարին, գեղեցիկը և ճշմարիտը» միտված **էակիր** այդ ձգտումը, ըստ Թումանյանի, իդեալի տեսքով առարկայանում է նախ բանահյուսական մշակույթի հնարավորություններով այնքանով, որ **իդեալները** նախ ծագում են պատմության կենդանի հյուսվածքում հարաշարժ հավաքական էության մղումների ուժով և գիտակցվում են հավաքական գոյաբանությունը կազմակերպելու գործառնություն:

Առասպելի իդեալակիր հերոսների ցանկությունը, Թումանյանի շեշտադրմամբ, ոչ թե **անհատի**, այլ մի **ժողովրդի** տենչանք է, որն արտահայտել է այդ առասպելի մեջ և «դրել է անհատի **սրտում**»: «Ժողովուրդի տենչանքը, ինչպես և ամեն մի զգացմունքն ու կիրքը, որ հայտնվում է զանազան ձևերով զանազան առասպելյալ անձնավորությունների ու դեպքերի մեջ, ավելի **ընդհանուր, ընդարձակ** և **մնայուն** է (ընդգծումները մերն են – Ա. Ա.), մի խոսքով բոլորին հասկանալի և բոլորինը» (6, 20): Ըստ Թումանյանի՝ այդ պատճառով է ժողովուրդը այն պահպանում **պատմելով**:

Հիշեցնենք, որ Վիլիելմ Վունդտի ուսմունքը, որին մասնակիորեն հաղորդ էր Թումանյանը, հայեցողականորեն հիմնավորում էր, որ մարդկության հավաքական էության ընդերքում **առկա է** իր գոյընթացին էվոլյուցիոնիստական՝ բարեշրջական, կազմակերպվածություն և ուղղվածություն տվող հիմնարար **ներուժ**: Այդ պատճառով էլ, ըստ նրա, մարդկության համապարփակ օնթոլոգիայի՝ գոյաբանության առավել ամբողջական ճանաչման, նաև համակարգման համար **անձի** էության՝ հոգեբանության փորձաբարական հետազոտությունը, ըստ էության, դեռևս բավարար նախադրյալ չէ: Վիլիելմ Վունդտը մարդկության գոյաբանության հարաշարժ կառուցակազմի և ընթացքի ճանաչողությունը առավել ամբողջական դարձնելու նպատակադրմամբ հիմնավորում էր ազգերի, ժողովուրդների՝ **հավաքական էության** հոգեբանության հետազոտման անհրաժեշտությունը: Թումանյանի աշխարհայացքը, բանահյուսական մշակումները քննելի են միայն այդ համատեքստում: Նրա կենսափնաստասիրությունը հիմնականում համադրվում հենց կառուցակերտ այդ **ներուժի** արմատական, հիմնարար միջոցների բացահայտման հետևողական և սևեռուն որոնումների շնորհիվ, որոնց վերաբերյալ Թումանյանն իր մտքերը հողվածներում և նամակներում, ցավոք, հպանցիկ է արտահայտել: Մինչդեռ թեմատիկ ու ժանրային առումներով նրա բազմակերպ գեղարվեստական ժառանգությունը իրա-

կանում համակարգվում, միասնանում է հիմնականում **բարեշրջության տեսության, մարդու կատարելագործման սկզբունքի** առանցքի վրա:

Բանահյուսության նկատմամբ Թումանյանի այդքան սևեռուն հետաքրքրությունն ինքնանպատակ չէր, այլ միջոց՝ տեսնելու, բացահայտելու այն արմատական և համաժամանակյա հատկությունները, որակները, որոնք անտեսանելիորեն գործում են ժողովրդի կենսակերպն իր իսկ **իդեալին** մոտեցնելու համար: Իդեալը ժողովրդի ոգու կենսունակությունն է, իր բարձրակարգ արժեքներով հավիտենականանալու կարողությունը: Թումանյանը մտովի համադրել էր, որ այդ «Կարոտից է առաջ գալիս ամեն բարձր բան: **Իդեալներն** ինչ են որ,– **հոգու կարոտներ»** (9, 260):

Թումանյանն անձի իդեալին չի խարսխում կատարելության ուղին, քանի որ այն համադրվում է մասնավոր ճակատագրի շուրջ, սահմանափակվում նրա գոյընթացի սահմաններով, մինչդեռ **ձմարիտը հավաքական կամքից համադրված իդեալն է**, համընդհանուր բարիքի ձգտող մղումը՝ իր ողջ ընդգրկումով: Բացի այդ՝ անձի իդեալը չի կրում կենսակերպը վերակերտելու այն ներուժը, որը հատուկ է հավաքական էությանը, որն էլ՝ որպես էթնիկ համընդհանուր ոգու կարոտ և իդեալ, առարկայանում է բանահյուսական երևութաբանությամբ (феноменология): Բանահյուսություն՝ «Ահա թե որտեղ է հայոց գրականության աղբյուրը. ահա թե որտեղից պետք է խմի հայոց բանաստեղծը, հայոց վիպասանը, հայոց գրողը, որ **գորանա** (ընդգծումը մերն է – Ա. Ա.)» (6, 42): **Զորանալ նշանակում է գեղարվեստորեն դրսևորել հավաքական կամքով ստեղծված՝ կատարելության տանող մնայուն ձմարտությունների ներուժը՝ էներգիան:**

Պատահական չէ, որ Թումանյանի այս առաջադրման էությունը թումանյանագիտությունն այդպես էլ իր ողջ իմաստով չընկալեց ո՛չ իր ժամանակին, ո՛չ էլ հետագայում, քանի որ **առաջադրումը չդիտարկեց բարեշրջության համատեքստում:** Ավելին՝ Թումանյանի մշակած բանահյուսական թեմաները տեղայնացված տարբերակներով կյանքի էին կոչվել նաև այլ ժողովուրդների բանահյուսությամբ, ինչը նա հրաշալի գիտեր և նաև հետևողական էր նման թեմաների ընտրության հարցում, քանի որ որքան տարածման մեծ կենսոլորտ ունի թեման, այնքան ավելի **ընդհանուր, ընդարձակ և մնայուն** գործարկվող նախադրյալներ է ենթադրում գոյի բարեշրջության կազմակերպման մեջ: Այդ պատճառով Թումանյանը կանխակալ հետևողականությամբ փնտրում էր առավել **տարածված և հնագույն** տարբերակները: Այս երևույթը Հ. Թենը բացատրում է հետևյալ կերպ. «...ինչքան տարածված և առավել հին է ինչ–որ սովորույթ, այդքան ավելի հիմնավորված է, այդքան խորն են նրա պատճառները, պատճառներ՝

քաղված ֆիզիոլոգիայից, հիգիենայից և հասարակական կանխատեսությունից»¹⁰:

Բանահյուսությունից օգտվելու այս եղանակի խորհուրդը չկռահեցին Հովհ. Թումանյանի հետ բանավիճողները՝ բանագողություն համարելով այն թեմաների մշակումը, որոնց փոփոխակները կային այլ ժողովուրդների բանահյուսություններում: Մինչդեռ Հովհ. Թումանյանը գիտնականի իմացությամբ քաջատեղյակ էր, որ բանահյուսությունը չի կարող լինել զուտ ազգային: «Հաճախ կհիասթափվեն էն մարդիկը, որոնք ուզում են անպատճառ էս կամ էն ժողովրդական ստեղծագործության – էպոսի, հեքիաթի, առակի և նման գործերի սկիզբն ու ծնունդը կապել բացառապես իրենց պապերի ու հայրենիքի հետ» (6, 212):

Փոքր-ինչ լայն համատեքստում քննարկենք բարեշրջության այն ուրվագծումները, որոնց համատեքստում մտակարգվում, շեշտադրվում էր նաև մարդու բարոյական պատասխանատվության և մասնակցության բնույթը: 19-րդ դարի երկրորդ կեսին **դրական (позитив) հետազոտությունների** հետևանքով ձևավորվում է **ամելիորիզմի՝** կյանքի աստիճանական բարելավման փիլիսոփայությունը, որը դառնում է կյանքի ճանաչումը համակարգող **արմատական** սկզբունք, համաձայն որի՝ զարգացման անիվը մարդկային համակեցությունը առաջ է մղում միշտ դեպի դրսևորման և կազմակերպվածության առավել բարձր ձևեր, դեպի այլազանություն ու կատարելություն: Հովհ. Թումանյանը այս կամ այն առիթով հենց այդ տեսանկյունից է շեշտադրել կատարելության տանող վերաձևումները՝ դրանք հավաստելով պատմության ընթացքի տեսանելի, իրական ձեռքբերումներով. «...բայց է՛ն մարդիկ, որ անսասան հավատում են **լավ գաղափարների աստիճանական, բայց հաստատուն զարգացումին ու հաղթանակներին, ինչպես անհատների մարդասիրությանը**, էնպես էլ **ազգերի առաջադիմությանն ու ազնվացումին**, էն մարդիկ, որ պարզ աչքով տեսնում են **պատմական ու իրական** էն հիմունքները, որ ապահովում են ազգերի լավ հարաբերությունները,– պետք է հավատան **լավ օրերին**.... (ընդգծումները մերն են – Ա. Ա.)» (7, 22):

Ընդ որում, բարեշրջության ըմբռնումը հռչակել էին դեռևս ուտոպիստները, որոնց հիմնավորմամբ՝ կատարելության գաղափարը և իդեալը ինչ-որ անբնական, շինծու, հորինվածք չեն և պարտադրված, այլ հարաշարժ բնության օրգանական կառույցի դրսևորման յուրահատուկ արտահայտություն են: Ըստ ուտոպիստների՝ ամենայն ինչի ընթացքը զարգացում է, որի շնորհիվ օրգանական կյանքը ապագայում սերելու է առավել վեհ իդեալներ, հանրակեցության առավել կատարյալ կերպեր:

¹⁰ Նույն տեղում, էջ 292:

Դեռևս **Սեն-Սիմոնը (1760–1825)** հռչակում էր, որ «մարդկությունը զարգանում է նույնքան օրինաչափ, որքան ողջ օրգանական աշխարհը, և այդ զարգացումն է տանում դեպի բարձրագույն կատարելություն»¹¹: Հետագա դրապաշտական ըմբռնմամբ՝ «ապագայում ֆիլանտրոպները կլծվեն բարձրագույն խնդիրների կատարման՝ չճգտելով բարձրագույն փառքի կամ որևէ գնահատականի, անհայտ մասնակցության բաժին ունենալով մարդու կատարելագործման գործում: Փորձը մշտապես ցույց է տալիս, որ հետապնդվող նպատակների նկատմամբ կարող է ծագել եսասիրության հետ ընդհանուր ոչինչ չունեցող բարձրագույն շահագրգռություն: Ժամանակն առաջ է գնում, և ավելի ու ավելի է բազմապատկվում թիվը այն մարդկանց, որոնց նպատակը մարդկության հետագա էվոլյուցիան է (ընդգծումը մերն է – Ա. Ա.)»¹²: Թումանյանը ազգերի և մարդկանց կյանքի գնահատականը դիտարկում է հենց այդ առանցքի վրա. «Վերջիվերջո՝ մենք անձնական կյանքով չենք ապրում, այլ մեծ մասամբ ուրիշի, ընդհանուրի, աշխարհի» (9, 262):

Դրական (позитивный) կարգուկանոնը ենթադրում է, որ յուրաքանչյուրն իր ուժերի ներածին չափով գործելու է և ապագայում ավելի նպատականդված կգործի ժամանակակից և ապագա **Մարդկությանը** ծառայություն մատուցելու, մի խոսքով՝ ուրիշին օգտակար լինելու համար: Այս հարցում ավելի հետևողական էր դրապաշտության հիմնադիրներից **Օգյուստ Կոնտը (1798–1857)**: Մարդկության միասնականության (человеческое единство) տեսությունը Աստծո փոխարեն դրական կրոնի գլխավոր անձ (субъект) է դիտում **մարդկությանը՝** որպես միասնական և ճշմարիտ Գերագույն էության (le Grand Être), որն ունի ներքին և արտաքին միասնություն: Դրական հավատը այդ արտաքին միասնությունը և այդ համաշխարհային կազմակերպվածությունը գիտակցելն ու դրան ենթարկվելն է: Այսուհետ, ըստ Կոնտի, անհատական և հավաքական մեր ողջ կեցությունը պատկանելու է այդ ճշմարիտ իրական Գերագույն էությանը, որի անհրաժեշտ անդամներն ենք մենք ինքներս: Հետևաբար նրան պետք է դառնան մեր մտածումները՝ նրան ձանաչելու, զգացմունքները՝ նրան սիրելու, և գործողությունները՝ նրան ծառայելու համար: Ըստ էության, մեր կյանքը իմաստալի և ճշմարիտ է դրսևորվում, երբ մենք մեզ ընկալում ենք իբրև այդ Գերագույն և ճշմարիտ էության անբաժանելի մասը և բարձր գիտակցականությամբ նպատակաուղղում ենք մեր խոհերը նրան ծառայելուն:

Կոնտը հիմնավորում է, որ յուրաքանչյուր անհատի կեցություն պատկանում է Գերագույն էությանը այնքանով, որքանով նրա մի մասնիկն է իր ականա և անհրաժեշտ գոյությամբ և չի կազմում այդ օրգանիզմի բաղա-

11 «Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона», т. 29, Сень-Симонь, СПб, 1900, с. 566.

12 «Мысли и афоризмы Г. Спенсера», СПб, изд. В. И. Губинского, 1903, с. 22.

դրիչը, եթե նրա գործունեության հիմնանպատակը մարդկությունը չէ, այլ իր նեղ մասնավոր շահերը:

Անհատի կապվածությունը կատարելագործման հարաշարժ ընթացք ունեցող Գերագույն էությանը՝ մարդկությանը, ենթադրում է ծառայության երկու կերպ: Այնքանով, որքանով անհատի կյանքը վաղանցուկ է, իսկ մարդկությունը՝ այդ կենդանի օրգանիզմը, հավերժ առաջխաղացող և փոփոխվող իրողություն է, այդ էության յուրաքանչյուր անհատական տարր անցնում է իրար հաջորդող երկու կեցություն՝ մինչև մահ եղածը կամ, Կոնտի եզրույթով, առարկայականը, երբ անհատը ուղղակիորեն, բայց անցողիկ ձևով է ծառայում Գերագույն էությանը, և հետմահու կամ անձնական՝ հավիտենականը: Վերջին դեպքում նրա ծառայությունը դառնում է մնայուն իր արդյունքով, իսկ ինքը՝ մնայուն սերունդների հիշողությամբ:

Մարդկության զարգացումը, ըստ Կոնտի, որքան առաջ է գնում, այնքան ավելի շատ տարրեր են անցնում անձնական, հավիտենական, ուստի և արժանավոր գոյության, ինչի հետևանքով ապրող փոքրամասնությունը սկսում է ավելի ու ավելի ենթարկվել անցավոր մեծամասնությանը, այն է՝ «մեռածները կառավարում են ապրողներին»: Համանմանորեն, ըստ Թոմանյանի, այս երկու աշխարհների հարաբերությամբ երկնային եզրը համադրված է լուսավոր հոգիներից, հետևաբար իդեալի և ուղեցույցի խորհուրդ ունի:

Այստեղ, անցվոր էս աշխարհում
Խարխափելով ապիկար,
Հուր հավատով քեզ ենք փարում,
Հո՛յս երկնային, լույս անմար:

Եթե մեր կյանքն և ինչ ունենք
Պատրանք են ողջ անցավոր,
Պատրանքներից վըսեմն ես դու
Եվ սըփոփանք մեծագոր:

Իսկ թե ունես մարդուն անհայտ
Անհաս խորհուրդ հաստատուն,
Ողջո՛ւյն, անմահ դու ճառագայթ,
Որ շողում ես մեր հոգուն:

Լուսավորի՛ր մեր մույթ ճամփան
Դեպի աշխարհն երջանիկ,

Ուր փոխվել են և այժմ կան
Մեր սիրելիք, մեր նախնիք:

Գուցե նրբանց հավերժացած

Հայացքն ես դու կենդանի,

Որ ժրպտում ես տրգետներիս

Անձառ ծոցից անհունի (ընդգծումները մերն են – Ա. Ա.): (1, 209)

Իսկ Ստեփան Ջորյանի՝ Ռոստոմի մահվան առիթով Թումանյանը գրում էր. «Գնա՛, Ստեփա՛ն ջան, դու էլ գնա **էն խորհրդավոր աշխարհքը**, ուր էնքան շատ լավ ընկերներ, հարազատներ ու սիրելիներ են գնացել ու էն աշխարհքը դարձրել **էնքան հրապուրիչ** (ընդգծումները մերն են – Ա. Ա.)» (7, 383): «Գաղափարների ու երազների աշխարհն է,– գրում է Թումանյանը Ֆ. Վարդազարյանին հղած նամակում,– որ ես մի խոսքով անվանել եմ **Վեր**: Բայց բացատրությունն ավելորդ է, թե բան կա՝ կա, թե չէ բացատրությունով բան դուրս չի գալ» (9, 297):

Մեռածների վաստակը, ըստ էության, այն բարձրագույն կատարյալն է, որին, մարդկության առաջընթացին զուգահեռ, ակամա ենթարկվում են ապրողների ճակատագիրը և բարձրագույն նպատակադրումները: Այլ խոսքով՝ իրական պրոգրեսն այն է, որ ապրող մարդկանց ճակատագիրը ավելի ու ավելի որոշվում է բարձրագույն կատարյալ և իրենցից անկախ կամքով:

Ներքին անձնական միասնությունը կամ Գերագույն էության ոգին, ըստ Կոնտի, կազմվում է անցյալ, ներկա և ապագա անհատական հոգիների՝ նրա հետ **սիրով** միավորվելով, որոնք կազմում են ճշմարիտ մարդկության տարրերը ոչ իրենց պատահական էմպիրիկ ողջ գոյությամբ, այլ իրենց կյանքի Գերագույն էությանն արժանի այն կողմով, որը նրանցում եղել է, կա և կլինի:

Գերագույն էության՝ մշտապես կատարելագործման մեջ գտնվող այդ կենդանի օրգանիզմի կեցության հիմքերը, զարգացման ազդակները և լիցքերը դրսևորվում են այդ կատարելագործմանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցող երախտավոր և օգտակար անհատների գործունեությամբ: Միասնանալը սիրո միջոցով Գերագույն էության համաշխարհային արտաքին կարգավորվածությանը, ինչպես նաև իր և իսկական մարդկությունը կազմող հանգուցյալ, ապրող ապագածին բոլոր անհատական հոգիներին կազմում է Գերագույն էության ներքին անձնական միասնությունը: Քննադատական ոգին կամ ապացույցների անպայման պահանջները (*les appels absolus à la démonstration*), ձգտելով հավաքական բա-

նականության հանդեպ անհատական դատողության գերիշխանության, ապրողների բունտ է մեռածների դեմ:

Համաձայն դրապաշտական ուսմունքների առաջադրման՝ յուրաքանչ-յուրն իր ուժերի ներածին չափով պետք է գործի ժամանակակից և ապագա **Մարդկությունը** ծառայություն մատուցելու: Մարդկությունն է արդ այն նախախնամությունը, որին անհրաժեշտ է ճանաչել, սիրել և ծառայել¹³: «Վերջիվերջո՝ մենք անձնական կյանքով չենք ապրում, այլ մեծ մասամբ **ուրիշի, ընդհանուրի, աշխարհի** (ընդգծումները մերն են – Ա. Ա.)» (9, 419),– ասում է Թումանյանը նամակներից մեկում:

Մարդուն և օրգանական աշխարհի երևույթներն աստիճանական զարգացման առանցքում դիտարկելը որոշարկում է նաև մարդկային վարքի, գործունեության գնահատման որոշակի բարոյականություն, որը դրապաշտներն անվանում են **էվոյուցիոն բարոյականություն**:

Հովհ. Թումանյանը, որը նաև յուրովի զարգացում էր բարեշրջության ուսմունքը, հաճախակի էր շեշտադրում էվոյուցիոն բարոյականության դերը: «Ամբողջ մարդկությունը մի ընտանիք է: Ժողովուրդները էդ մեծ ընտանիքի անդամներն են: Գնում են մի նպատակի, և ամեն մեկն ունի իր դերը–երջանիկ դարձնելու ամենքին, և ամենքի երջանկությունը դարձնելու ամեն մեկի երջանկությունը» (8, 450): Այս պատկերացմամբ էական դեր է վերագրվում անհատի նախաձեռնող ներուժին և բարոյական պատասխանատվությանը:

Մեծ կյանքը, որին տանում է բարեշրջությունը, յուրահատուկ տիեզերաշինություն է, որը միայն երազանքով ու վսեմ երազներով չի կերտվի: Դա տեղի կունենա մարդու և հատկապես ժողովրդի ոգու երբեմնի մշակած արժեքները, «լավագույն զգացմունքները» զարգացնելու և գեղարվեստով հղկելու ճանապարհով:

Բարեշրջության մեջ ժողովրդի հոգեբանության դերն ընդգծելը, ըստ Վունդտի, «նպատակահարմար է այն պատճառով, քանի որ ազգը կարևորագույնն է այն համախումբ շրջանակներից, որոնց մեջ զարգանում է համատեղ հոգևոր կյանք»¹⁴: Թումանյանը, թերևս հետևելով հոգեֆիզիոլոգիայի բնագավառում մշակված՝ ժողովուրդների հոգեբանության և հոգևոր զարգացման աստիճանակարգության ըմբռնմանը, հետազոտելով միֆերի, կրոնների ու պատմության ձևավորման **հոգեբանական** պատճառաբանությունը, ընդհանրացնում է, որ ազգն է այն միակ հիմքը, որից կարող է սկիզբ առնել համամարդկային իդեալներ տանող ճանապարհը, ինչը ազգի հոգևոր զարգացման հաջորդ՝ բարձրագույն աստիճանն է:

13 Տե՛ս «Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И. А. Ефрона», т. 16, СПб, 1895, էջ 128-129:
14 Вундт В., Проблемы психологии народов, М., 1912, с. 27.

Բարձրագույն հոգեկան պրոցեսները և ամենից առաջ ժողովրդի ինքնատիպ հոգեկան կերտվածքի գործառույժը համամարդկային իդեալների մշակման մեջ արդյունք են մարդկության համակեցության պատմական զարգացման, որի ընդերքում, ըստ ֆիզիոհոգեբանության, գործում է **մարդկության համընդհանուր կամքի** հարաշարժ ներուժը: Ըստ այդ պատկերացման՝ ընդհանուր կամքի մեջ ներառված և նրա հետ մշտապես փոխազդեցության մեջ գտնվող առանձին կամքը, ընդհանուր կամքի կողմից մշտապես ներգործության ենթարկվելով, իր հերթին նրա վրա է ազդեցություն գործում, որի աստիճանը կախված է տվյալ անհատի հոգևոր զարգացման աստիճանից: Այսպես՝ առանձին անձը նախապես ցեղի, ընտանիքի, պրոֆեսիոնալ ընկերակցության, այնուհետև, կամքի ընդլայնվող զարգացմամբ, ազգի, պետության անդամ է, և ի վերջո, այդ ամենին զուգահեռ, **բարձրագույն կամային միասնությամբ** նա կարող է մասնակցություն ունենալ կուլտուրական ժողովուրդների կամային հաղորդակցությանը, շփումների: Այդպես է ըմբռնում իրողությունը նաև Հովհ. Թումանյանը, որը գոյաբանական՝ հարատևության նշանակությամբ է իմաստավորում հայ ժողովրդի մասնակցությունը համամարդկային արժեքների մշակմանն ու իդեալների կենսագործմանը, հետևապես կյանքի **տիեզերական էվոլյուցիային**: Նա ժողովրդական ոգու բանահյուսական դրսևորումների մեջ փնտրում էր այն **ադամանդները**, որոնցով հայ ոգին մասնակցելու էր տիեզերական էվոլյուցիայի ճարտարապետությանը:

Մարդու կատարելագործման, լավասերման տիեզերական բարեշրջությունը և՛ տեսաբանների, և՛ Թումանյանի պատկերացմամբ **համաշավիղ** ընթացք ունի: Հարաշարժ գոյընթացը կազմակերպվում է էթոսների հավաքական կամքով մշակված բարոյական և հոգևոր բարձրակարգ որակներով:

Մարդկության միասնական համակազմվածքում յուրաքանչյուր էթոսուսի ներդրումը, պահելով էթոսուսի ինքնության որակները և գույները, **Իդեալը** կերտելու, մարմնավորելու կառուցակազմիկ գործառույթ ունի: **Մեծ կյանքն** արարելու հումքը, ըստ էության, էթոսուսի հազարամյակների գոյընթացի հղկած և բյուրեղ դարձրած բարոյական և հոգևոր այն **որակներն են** և **փորձառությունը**, խարամից մաքրված այն **ոսկին**, որոնցով էթոսը դառնալու է **կերտող ներկայություն** Գերագույն էության կամ, Թումանյանի ձևակերպմամբ, Մեծ կյանքի ճարտարապետության և շինարարության գործում: Այդ համատեքստում Թումանյանը շեշտադրում է հայ էթոսը բնութագրող մի շարք որակական հատկորոշիչներ, որոնք էթոսհոգեբանական արժեքավոր դիտարկումներ են: Նման եզրահանգումը ցեղային բնագոյով թելադրված հայրենասիրական էգոիզմ չէ, այլ իմաստասերի, նաև գիտնականի ստուգատես հավաստում: Մի եզրահանգում, որը բխում

է հայ ոգու և հայության գոյընթացի տեսանելի կուլտուր-պատմական երևութաբանությունից (феноменология):

Բանաստեղծը նախ շեշտադրում է **ժողովրդի «բարոյական մեծության»** գործառույթը: Հայ ոգու **բարոյական** ներուժը, ըստ Թումանյանի, զգայելի է նախ հայկական մշակույթի (բանահյուսություն, գեղարվեստ, ճարտարապետություն և այլն) երևութաբանությամբ: Ճիշտ է, Թումանյանի շեշտադրմամբ, թվով փոքր ժողովուրդ ենք, բայց թվական մեծությունը գուցե թե անհրաժեշտ է մեծ պատերազմներով ազգեր ու աշխարհներ կործանելու համար, իսկ գրականության ու գիտության մեջ, որ նույնպես մեծ պատերազմ է, պատերազմ լույսի ու խավարի, խնդիրը վճռում է ժողովրդի **բարոյական** մեծությունը:

«Ես գարմանալի **մեծ հավատ** ունեմ ու **մեծ կարծիք** մեր ցեղի հոգևոր ու բարոյական կարողության (պոտենցիա) վրա (ընդգծումները մերն են – Ա. Ա.)» (10, 350),– գրում է Թումանյանը: Հետևաբար, որպես տիեզերական էվոլյուցիայի կերտող սուբյեկտ, կուլտուրական ազգերի հետ մեկտեղ «Հայը շատ բան ունի տալու մարդկությանն ու աշխարհքին» (7, 453): Թումանյանը հատկապես ընդգծում է էպոսը, որն ազգային ոգու մարմնացումն է, ազգի ապրած կյանքի խտացումը, իսկ էպոսի հերոսները նրա հոգեկան և բարոյական կարողությունների մարմնացումն են, հետևաբար նրա մեծության ու կուլտուրականության չափանիշը: «Ամեն մի ազգի ուժն ու ոգին մարմնացած է իր ազգային էպոսի մեջ...» (7, 147): «Եթե ճշմարիտ է, որ էպոսը մի ժողովրդի ապրած կյանքի խտացումն է և եթե ճշմարիտ է», որ էպոսի հերոսները նրա հոգեկան և բարոյական կարողությունների մարմնացումն են», հետևաբար նրա մեծության ու կուլտուրականության չափանիշը– ապա հայ ժողովուրդը՝ հիրավի, մի մեծ {ու բարձր կուլտուրական} ժողովուրդ է, քանի որ Սասունցի Դավթի նման մի հոյակապ էպոս ունի» (8, 302): Եվ, որ ամենակարևորն է, անցյալի մեր մշակույթը, ըստ նրա, «նյութական հարստություն չի, այլ **բարոյական, հոգեղեն, մտավոր, խոսքի ու բանի կարողություն**» (6, 391):

Թումանյանը առանձնացնում է բարեշրջությանը նպաստող նաև այլ անհրաժեշտ գործոններ, որոնք գրականագիտության կողմից տեսական մտակարգման կարիք ունեն: Դրանցից են նաև էթնոսի **ստեղծագործական կարողությունները**: Այդ առումով, բանաստեղծի կարծիքով, հայը նույնպես շատ բան ունի տալու մարդկությանն ու աշխարհին:

Անհրաժեշտ հիմնարար նախադրյալ է հայ ժողովրդի անցած հազարամյակների ճանապարհը, որի հետևանքով «մենք **կուլտուրաներ ունեցած** ու **ապրած** ժողովուրդ ենք» (7, 51): «Մենք պատմական շրջաններ ենք ապրել, մենք կուլտուրաներ ենք տեսել, մենք Ասորեստանի ու Բաբելոնի հետ ենք ապրել, մենք հին Իսրայելի և Եգիպտոսի օրերից ենք գալիս» (6,

390): «Մեր ազգը, որ աշխարհքի ու Արևելքի ամենահին ազգերից մինն է, և մեր աշխարհքը, որ մի լիքը թանգարան է ամեն տեսակի կենցաղագիտական, պատմական, կրոնական, բանահյուսական և այլ մեծարժեք նյութերի....» (6, 249):

Անհրաժեշտ նախադրյալներ են նաև հայի **ստեղծագործական հանձարը** և **կարողունակությունը**: «...երթերային բարձունքները» երբեք խորթ ու անմատչելի չեն եղած **հայի հոգուն**, որ **հայի հանձարն էլ է** միշտ սավառնացել էն վսեմ, էն սուրբ ու նուրբ ոլորտներում....» (7, 204): Հայկական ճարտարապետության առիթով. «...իրենց հետ տանում են հայ ժողովրդի **ստեղծագործական հանձարն** ու **կարողությունը** (ընդգծումները մերն են – Ա. Ա.)» (7, 136):

Միաժամանակ շեշտադրելի է նաև, որ հայը «հին **կուլտուրական** ժողովուրդ է, **ընդունակ** ու **վերածնվող** ժողովուրդ» (7, 157): Մեկ այլ առիթով. «...թեև երբեմն աղձատված, ինչպես հայի ազգային ոգին, բայց ընդհանրապես **կենդանի** ու **կենսունակ**, ինչպես հայոց ազգը, և, առասպելական ֆենիքսի նման, ընդունակ ավերակներից հառնելու, նորափետուր սավառնելու դեպի» (7, 295) **գեղարվեստի ամենաբարձր ոլորտները** և **գիտության անհուն խորությունները**: Թումանյանն ընդգծում է նաև հայ ժողովրդի կուլտուրականությունը, նրա անվերջ ձգտումը դեպի **լույսն** ու **գիտությունը** (տե՛ս 6, 220):

Եվ մյուս նախադրյալները, որ խիստ անհրաժեշտ են, հայ ոգու՝ իր ինքնությունը պահելու ճիգը և խորագիտությունն են: Ինչպես անհատը, որ իր աստիճանով կամ պաշտոնով չէ բարձր, այլ իր **ինքնուրույն կերպարանքով**, այդպես էլ քաղաքականապես հզոր ազգերը, որոնք իշխել են, երբ կորցրել են քաղաքական անկախությունը, հետզհետե հավվել են ժողովուրդների մեջ ու կորել: Ցեղեր էլ կան, որ կորցրել են քաղաքական անկախ կյանքը, բայց պահել են իրենց **ազգային կերպարանքը**: Այդպիսին է «մեր դժբախտ ցեղը», որ պահել է իր **կերպարանքը** (տե՛ս 6, 193-195):

Ըստ էվոլյուցիոնիզմի տեսաբանների՝ էվոլյուցիայի երկար ճանապարհ անցած էթնոսի ոգուն հաղթահարվում է **գազանը**: Պարզապես էվոլյուցիայի նպատակը «գազանը նորից մարդ դարձնելն» (10, 165) է: «Արյունի սերը խորթ է մեր ազգի ոգուն, որ խաղաղությունն է սիրել, մեր բնավորությանը, որ աշխատանքն է սիրել, մեր պատմությանը, որ օրհասական մաքառումների անվերջ շարքեր է պատմում, բայց արյունի սեր չի արձանագրել երբեք» (6, 477):

Թումանյանի բնութագրումները էթնոհոգեբանության ընկալման գիտական արժեք ունեն, քանի որ բխում են հայ ժողովրդի պատմության և մշակույթի համապարփակ և խորքային հետազոտությունից: Եվ վերջապես, բանաստեղծական, բայց ստուգատես տարողունակ մի բնութագրում՝

«**հայի խորունկ հոգին**»: Ընդգծելով **հայ** էթնոսի **ստեղծագործ, արարող էությունը**՝ բանաստեղծը առանձնահատուկ կարևորություն է տալիս նրա առաքելությանը **Մեծ կյանքի** արարումների ճանապարհին որպես **հարատևության** էակիր նախապայման: Թումանյանը հայ ոգին մեկ անգամ չէ, որ հատկորոշում է **խորունկ** հասկացությամբ:

Կատարելության տանող **վերընթաց** երթին մասնակից **հայ** էթնոսը կրում է իր «խորունկ հոգու» մշակութային պատմության ողջ հիշողությունը: Այս ամենի գիտակցությամբ է Թումանյանը բացահայտում հայության դերը:

«Ու մեծ է մեր հավատը հայ ժողովրդի կուլտուրական ուժի ու նրա պայծառ ապագայի վրա», որ նա հաղթանակով է պսակելու «խավարի ու հույսի նվիրական պատերազմը» (6, 393):

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,
Ու մենք անհատնում
Էն անլույս մըթնում
Երկա՛ր դարերով գընում ենք **դեպ վեր**
Հայոց լեռներում,
Դըժար լեռներում:

Տանում ենք հնուց մեր գանձերն անգին,
Մեր գանձերը ծով,
Ինչ որ դարերով
Երկնել է, ծնել **մեր խորունկ հոգին**
Հայոց լեռներում,
Բարձր լեռներում:

Ու մեր աչքերը նայում են կարոտ
Հեռու աստղերին,
Երկընթի ծերին,
Թե երբ կըբացվի պայծառ առավոտ
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում (ընդգծումները մերն են – Ա. Ա.): (1, 206)

Հայրենիքը, սրբազան հովիտները առանձնանում են երկիր-երկինք կապի սրբազան խորհրդով, ինչը տեսանելի է դարձնում այն վսեմ դերառույթը, որին կոչված է մեր խորունկ հոգին:

Այստեղ մի վսեմ խորհուրդ է ապրում
Ծանր վեհությանը իջած երկնքից,
Այստեղ սրբազան մի շունչ է բուրում,
Որ վեր է տանում մեզ այս աշխարհից:

Մի շունչ, մի խորհուրդ, մեծ, հրաշալի,
Խառնըված **հայոց մեր խորունկ հոգուն**,
Եվ որքան դարեր, դարեր են գալի,
Մենք միշտ հավատով, մենք միշտ աննկուն: (1, 210)

Դրապաշտները հիմնավորում են, որ մարդն ազատ է համընդհանուր պատճառականությունից, հետևաբար իրեն պետք է ընդունի որպես արարող, որպես **բարձրագույն կենսակերպի** արմատական և հիմնարար պատճառ տիեզերքում:

Հոգիս՝ տանը հաստատվել-
Տիեզերքն է ողջ պատել,
Տիեզերքի տերն են ես,
Ո՞վ է արդյոք նկատել: (2, 24)

Նման պարագայում նա որոշ չափով իրեն պատասխանատու է զգում տիեզերքի համար, քանի որ ստահաու աշխարհն ընկալվում է ոչ թե որպես անմիջական և հավիտենական ռեալություն, այլ մաքուր իդեալի տեսքով մարմնավորման կոչված նպատակաբանություն (телеология): «Թեև քաղցր է հասարակության ցավով տնքալ,- գրում է Թումանյանը,- մեր տկար ուժերը կազդուրելու և **ազգի և մարդկության բարօրության օգտին գործադրելու** մասին մտածենք: Թող գնայուն մեռյալներն ասեն, թե ծակ ֆիլանտրոպներ ենք և այլն: Բայց այս է **մարդու կյանքի խորհուրդը**, մենք պարտավոր ենք մեր բանականությունը զարգացնել և միշտ հառաջ ու հառաջ դիմել դեպի **կատարելության** սահմանները...» (9, 17):

«Մարդու նեղ և աղքատիկ կյանքը,- գրում է գերմանացի փիլիսոփա Ֆրիդրիխ Լանգեն,- ամբողջովին կարիք է զգում թևավորման մեր կոչմանը վերաբերող բարձրագույն հույսերի, և խելացի կլինի մեր երևակայությանը թողնել այդ հույսերի զարգացումը, միայն թե դրանք հակամարտության մեջ չլինի ակնհայտ փաստերի հետ: Քանի որ սկզբունքորեն ընդունված է, որ մենք մեր ստքում պետք է ստեղծենք աշխարհը ավելի գեղեցիկ և ավելի կատարյալ, քան իրական աշխարհն է, ուրեմն հարկ է ընդունել նաև միֆի նշանակությունը: Հարկ է, սակայն, որ մենք հասնենք այն գիտակցությանը, որ նույն անհրաժեշտությունը, մեր մարդկային էության

նույն տրանսցենդենտ արմատը, որոնք մեր զգացմունքների միջոցով տալիս են մեզ համաշխարհային իրականության պատկերը, կհանգեցնեն նաև մեզ այն բանին, որ ստեղծագործական մղման բարձրագույն համադրմամբ մենք կստեղծենք իդեալի աշխարհը, որտեղ կարող ենք մեր զգացմունքների դրած սահմաններից դուրս գալ, և որտեղ մենք կրկին ձեռք կբերենք **ոգու իսկական հայրենիքը** (ընդգծումը մերն է – Ա. Ա.)»¹⁵: Իսկ «**ոգու իսկական հայրենիքը**», ըստ Թումանյանի, '«էն եթերային բարձունքն է», էն երջանիկ աշխարհքն է, որ բոլոր հայրենիքներն ու կրոնները միացնում է գեղեցկության, ճշմարտության ու արդարության մեջ, ուր այլևս խտրություն չկա և ամենքից հավասար սիրվում է ամեն մեկը, **ով էնտեղ կհասնի**: Իսկ «եթերային բարձունքները» երբեք խորթ ու անսատչելի չեն եղած հայի հոգուն, որ հայի հանձարն էլ է միշտ սավառնացել էն վսեմ, էն սուրբ ու նուրբ ոլորտներում...» (7, 203–204):

Թումանյանը գոյաբանական նշանակությամբ է իմաստավորում հայ ժողովրդի մասնակցությունը քաղաքակրթությանը, կուլտուրական ազգերի երթին, հետևապես կյանքի **տիեզերական էվոլյուցիային**, ինչը **իմաստասերի ստուգատես իմացությամբ** համարում է նրա հարատևության էական նախապայմանը: Նա, ըստ էության, հայ ոգու և հայ մշակույթի գործառույթը ուրվագծում է համամարդկային ստեղծագործական նոր կարողականության ուժով մարդու կատարելագործման և նոր կենսակերպի կերտման տիեզերական էվոլյուցիայի համատեքստում: Ահա այդ ըմբռնման գեղարվեստական համարժեք փոխաձևությունը.

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
Ու իմ սիրտը իմ մըտքի հետ անհուններն է թափառում,

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն, **խորհրդավոր ճամփին նորի ու հընի**.
Հառաչանքով սըրտի խորքից խոսք ես խոսում աստծու հետ

Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին–
Հույսի՛ հայրենիք,
Լույսի՛ հայրենիք (ընդգծումները մերն են – Ա. Ա.): (1, 269)

15 Ланге Ф. А., История материализма и критика его значения в настоящем, т. II, Киев, Харьков, 1900, с. VIII.

Արամ Գ. Ալեքսանյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է 19–20–րդ դարերի հայ գրականության պատմության և տեսության հիմնահարցերը: 1997 թ. հեղինակել է «Գրիգոր Զոհրապի կենսափիլիսոփայությունը», իսկ 2013 թ.՝ «Հակոբ Պարոնյանի կենսափիլիսոփայությունը» մենագրությունները: Թարգմանել է 3 գիրք, կատարել խմբագրական աշխատանք: Տպագրել է մոտ 150 հոդված հանրապետության և Սփյուռքի հանդեսներում:

Summary

EVOLUTIONISM – A NEW LEVEL OF PHILOSOPHY OF LIFE

Again on Tumanyan’s philosophy of life

Aram C. Alexanyan

Candidate of Sciences in Philology

Key words – analytical-comparative education, transcendental thinking, evolution, mysticism, church, religion, Armenians as a subject of universal evolution, preconditions and means of evolution.

Hovhannes Tumanyan’s philosophy of life has never become a separate theme for investigation. This issue was partly touched upon in the written voluminous monographs and articles but has never been studied completely and comprehensively.

Moreover, the Tumanyan studies of the Soviet years evaluated the literary heritage of the poet by value-based forms deriving from ideology (realism, the expresser of social protest, writer of village life, the singer of the nation’s desires, hopes and feelings, popularity, etc.). To this was added the irrelevant and simplified apologetics, that is, the praise that the contemporary Tumanyan studies are flooded with. Tumanyan’s views and artistic heritage have never been considered in the context of European philosophy. Whereas, this is the most effective research method of studying his oeuvre. We believe that this research method will create a scientific environment for a more comprehensive scientific research of Hov. Tumanyan’s worldview, as well as his artistic heritage.

From this viewpoint, in our previous article Hov. Tumanyan’s radical insights deriving from W. Wundt’s doctrine were revealed: a) theory of evolution, b) the necessity of perceiving the nations’ psychology, c) classification of the

world as a spiritual reality, d) universal voluntary unity of mankind and ideals, etc. The abovementioned is supplemented with the accentuations on the geographical deterministic and cultural-historical method.

The given article discusses the nature of the poet's learning and determination of philosophy of life. Tumanyan's learning, in fact, has never been a constant assimilation of any doctrine or idea. To the extent that his worldview is characterized by its analytical-comparative nature, Tumanyan's philosophy of life cannot be viewed as an adequate follow-up to the teaching, but as a qualitatively independent eclectic combination.

This article examines his transcendental thinking towards the absolute knowledge of existence and the world. Tumanyan's versions of the ideas on rationalization of evolution are presented. Reasons for becoming a subject of cosmic evolution of the Armenian ethnos are revealed with references to historical and cultural musicology (creative genius of the Armenian ethnos, a culture of preserving ethnic identity, the fact of living cultures of different eras, the strong moral potential of Armenian culture, etc.).

Резюме

ЭВОЛЮЦИОНИЗМ – НОВЫЙ УРОВЕНЬ ФИЛОСОФИИ ЖИЗНИ

Вновь о философии жизни Туманяна

Арам С. Алексанян
Кандидат филол. наук

Ключевые слова – сравнительное исследование, метафизическое мышление, эволюция, мистика, церковь, религия, армяне как субъект общечеловеческой эволюции, предпосылки и средства эволюции.

Философия жизни Ованеса Туманяна никогда не становилась темой отдельного исследования. В опубликованных монографиях и статьях эта проблема частично затрагивалась, однако не подвергалась полному и всестороннему изучению.

Более того, в советские годы наука, изучающая творчество туманяна, оценивала художественное наследие поэта в соответствии с правилами, определяемыми идеологией (реализм, выразитель социального протеста, пишущий на сельские темы, певец чаяний, надежд, переживаний народа, народ-

ность и т.д.). Вдобавок к этому излишняя и примитивная апологетика, которой переполнена указанная отрасль науки в наши дни.

Взгляды Туманяна и его художественное наследие никогда не рассматривались в контексте европейской философии. В то время как это самый эффективный метод изучить его творчество. Мы придерживаемся того мнения, что такой метод исследования создаст научную среду для комплексного научного исследования философии жизни Туманяна и его художественного наследия.

С этой точки зрения в нашей предыдущей статье были раскрыты радикальные выводы Ов. Туманяна, взятые из учения В. Вундта: а) теория эволюции, б) необходимость познания психологии народов, в) восприятие мира как духовной реальности, д) универсальная воля человечества и идеалы и т.д. Изложенное выше дополняется акцентами на географический детерминизм и культурно-исторический метод.

В данной статье рассматривается характер учения поэта и его мировоззрение. Учение Туманяна, по сути, никогда не было усвоением какого-либо учения или идеи в целом. Насколько его мировоззрение характеризуется аналитико-синтетическим характером настолько философию жизни Туманяна нельзя рассматривать как равнозначное следствие какого-либо учения, а, наоборот, как качественно самостоятельное эклектическое сочетание.

В статье рассматривается естественное мышление поэта, направленное на абсолютное знание бытия и мира, также представляются туманяновские варианты рационализации эволюции, раскрываются обоснования превращения армянского этноса в субъект космической эволюции со ссылками на историко-культурную феноменологию (творческий гений армянского этноса, культура сохранения этнической идентичности, факт существования культур разных эпох, мощный нравственный потенциал армянской культуры и т.д.).

REFERENCES

1. “Enciklopedicheskij slovar’ F. A. Brokgauza I I. A. Jefrona”, t. 29, Sen“-Simon“, SPb, 1900 (**In Russian**).
2. “Enciklopedicheskij slovar’ F. A. Brokgauza I I. A. Jefrona”, t. 16, SPb, 1895 (**In Russian**).
3. “Mysli I aforizmy G. Spensera”, SPb, izd. V. I. Gubinskogo, 1903 (**In Russian**).
4. **Alek’sanyan A.**, Levon Shant’i yev Hovhannes T’umanyani kensaimastasirut’yunë, “Vëm”, Yer., 2019, N 1, ëj 67-100 (**In Armenian**).
5. **Ful’je A.**, Nische I immoralizm, SPb, 1905 (**In Russian**).
6. **Lange F. A.**, Istorija materializma I kritika ego znachenija v nastojash’em, t. 2, Kiev, Xarkov, 1900 (**In Russian**).
7. **Shvejcer A.**, Kul’tura I Etika, M., 1973 (**In Russian**).
8. **Ten I.**, Proisxozhdenije obsh’estvennogo stroja sovremennoj Francii, t. 1, SPb, 1907 (**In Russian**).
9. **T’umanyan Hovh.**, Yerkeri liakatar zhoghovatsu, hat. 1, Yer., 1988, hat. 2, Yer., 1990, hat. 3, Yer., 1989, hat. 6, Yer., 1994, hat. 7, Yer., 1995, hat. 8, Yer., 1999, hat. 9, Yer., 1997, hat. 10, Yer., 1999 (**In Armenian**).
10. **Vundt’ V.**, Problemy psixologii narodov, M., 1912 (**In Russian**).